



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Հրատարակութեան խնդրանքով

ՔԱՆՍԱՍ ՍԻԹԻԻ ՄԷՋ ԿԸ ԿԱԶՄՈՒԻ ՆՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՄԸ

Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի թելադրութեամբ՝ Պէլվիլ Իլլիինոյի Ս. Շողակաթ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Շնորհք Ժ. Վրդ. Գասպարեան Ապրիլ 27ին այցելած է Միգուրի նահանգի Քանսաս Սիթի բնակութիւն հաստատած հայութեան:

Հովուական այս այցելութիւնը մեծապէս ուրախացուցած է քաղաքի Հայ հայրենակիցները՝ որոնք բնաւ միխթարութիւնը չէին ունեցած Հայ հոգեւորականի մը այցելութիւնը վայելելու:

Հայր Շնորհք այցելած եւ ծանօթացած է բազմաթիւ հայերու եւ տղւոյն վրայ նշանակուած է ծխական խորհուրդ մը հետեւեալ կազմով՝  
Հոգշ. Տ. Շնորհք Ժ. Վրդ. Գասպարեան՝ նախագահ  
Արա Զաքարեան՝ ատենապետ  
Ճէնիֆըր Հաթութեան՝ ատենադպրուհի  
Զաւէն Հաթութեան՝ գանձապահ  
Աստղիկ Սթէլլա Կիւլայեան՝ խորհրդական  
Ռոզ Օնպաշեան՝ խորհրդական  
Նաթալի Հաթութեան՝ խորհրդական  
Մայքըլ Ֆրէնքեան՝ խորհրդական

Առաջնորդ Սրբազան Հայրը գրաւոր կերպով պաշտօնապէս հաստատած է այս ծխական խորհուրդը:

Այս տարի Ամերիկայի Ազգային Եկեղեցիներու խորհուրդի ժողովը գումարուած է Միգուրի նահանգի Քանսաս Սիթի մէջ: Այս ժողովին մասնակցելու համար Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, Տ. Շնորհք Ժ. Վրդ. Գասպարեան եւ Տ. Կարապետ Բինյ. Քոչաքեան Մայիս 13ին ժամանեցին Քանսաս Սիթի: Նոյն գիշերը՝ նորին Սրբազնութիւնը հանդիպում ունեցաւ նորակազմ ծխական խորհուրդի անդամներուն հետ:

Նախապէս եղած կարգադրութեան համաձայն՝ Մայիս 14ի երեկոյեան, տեղւոյն Յունաց եկեղեցիին մէջ, Առաջնորդ Սրբազան Հայրը Ս. Պատարագ մատոյց, քարոզեց եւ Ս. Հաղորդութիւն մատակարարեց: Կրօնական այս պաշտամունքին ներկայ էին տեղացի 50 Հայ հաւատացեալներ, ինչպէս նաեւ Յոյն եւ Սերպ եկեղեցիներու ներկայացուցիչներ:

Յաւարտ Ս. Պատարագի, եկեղեցւոյ սրահին մէջ ճաշ սպասարկուեցաւ: Այս առթիւ խօսք առին հիւր եկեղեցականներ, ինչպէս նաեւ նորակազմ ծխական խորհուրդի անդամներ՝ որոնք ուրախութիւն եւ գոհունակութիւն յայտնեցին իրենց հանդէպ ցոյց տրուած այս հետաքրքրութեան համար, եւ խոստացան հետզհետէ աւելի կազմակերպուիլ եւ զանազան ձեռնարկներով համախումբ պահել տեղւոյն Հայերը:

Առաջնորդ Սրբազան Հայրը նախ շնոհաւորեց նորակազմ ծխական խորհուրդի անդամները, եւ իր խրախուսական խօսքերով քաջալերեց ներկաները եւ յաջողութիւն մաղթեց բոլորին: